



## ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

20-րդ դարի մարդկության մեծագույն ողբերգություններից մեկը կարելի է համարել Հայոց Մեծ Եղեռնը: Մեծ ոճիրի արմատները ավելի վաղ էին ձևավորվել: Դրա առաջին



Մասուկի կոտորածը (1894թ. օգոստոս)  
Շարաթոբյա ակումբ (Նյու Յորք)

կազմակերպիչն ու իրագործողը եղավ Թուրքիայի սուլթանական վարչակարգը: 19-րդ դարի 70-80-ական թվականներին հայ ազատագրական շարժման մեջ կատարված արմատական շրջադարձը, Հայկական հարցի միջազգայնացումը սուլթանական արքունիքում ավելի առարկայական էին դարձնում հայասպան ծրագիրը: Սուլթան Աբդուլ Համիդի 1894-1896թթ. կազմակերպած արևմտահայերի ցեղասպանության

ժամանակ զոհ գնացին 300000-ը, բռնությամբ մահաբեղականացվեցին շուրջ 100000-ը, 300000 արևմտահայեր էլ արտագաղթեցին Ռուսաստան, Պարսկաստան, Ֆրանսիա, Բալկանյան երկրներ և Ամերիկա: 1908թ. Օսմանյան կայսրությունում ռազմական հեղաշրջման միջոցով իշխանության եկած «Իթթիհատ վե Թերաքքի» («Միություն և Առաջադիմություն») կուսակցությունը, տապալելով Աբդուլ Համիդյան բռնատիրական իշխանությունը, հռչակեց, որ այսուհետ Թուրքիայում ապրող ազգությունների միջև կլինի իրավահավասարություն:



Ադանայի փլատակները (Կիլիկիա), 1909

Սա մեծ ոգևորություն էր Թուրքիայում ապրող ոչ թուրք ազգությունների՝ այդ թվում արևմտահայերի համար: Սակայն ընդամենը մեկ տարի անց՝ 1909թ., երիտթուրքերը ցույց տվեցին իրենց իրական դեմքը՝ կազմակերպելով Կիլիկիայում հայերի ջարդեր: Դրանց զոհ գնացին ավելի քան 30000 հայ:

Պաշտոնապես ընդունելով պանթուրքիզմը՝ երիտթուրքերը նպաստավոր պահի էին սպասում դրա իրականացման համար, որն էլ դարձավ առաջին համաշխարհային պատերազմը: Սակայն երիտթուրքական արկածախնդիրների ճանապարհին, որպես մեծ խոչընդոտ, ընկած էր հայ ժողովուրդը, որի հայրենիքը սեպի նման խրված էր մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից՝ Ռուսաստանի և Պարսկաստանի թուրքախոս երկրնամասերի



միջև: Նախ հարկավոր էր վերացնել հայական այդ սեպը հայ ժողովրդին գլխովին



Հայերի կոտորածը Կոստանդնուպոլսում, 1915թ. հունիս

բնաջնջելու, Հայաստանն իսպառ հայաթափ անելու միջոցով: Երիտթուրքական իշխանությունները մանրակրկիտ ձևով ծրագրեցին այս հրեշավոր մտահաղացումը: Էնվերի հրահանգով ստեղծվեց «Թեշքիլաթ մահսուսա» («Հատուկ կազմակերպություն»): Այս կառույցն էլ, որի շուրջ համախմբվել էին երիտթուրքական կուսակցության շատ անդամներ, թուրք սպաներ, բանտերից ազատված քրեական հանցագործներ, դարձավ Հայոց Մեծ Եղեռնը

գործողության մեջ դրած հիմնական շարժիչ ուժը: Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրագործման մեջ իրենց դերակատարումն ունեցան երիտթուրքական իշխանության այնպիսի բարձրաստիճան դեմքեր, ինչպիսիք էին զինված ուժերի հրամանատար Էնվերը, ներքին գործերի նախարար Թալեաթը, դոկտոր Նազըմը, դոկտոր Բեհաեդդին Շաքիրը, լուսավորության նախարար Միդհատ Շուքրին և այլք: Երիտթուրքերի կազմակերպած Հայոց ցեղասպանության ծրագիրը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի:

**Առաջին փուլ.**

1914թ. հուլիսի 25-ին հրապարակված զորահավաքի շրջանակներում թուրքական իշխանությունները բանակ էին զորակոչում 15-60 տարեկան հայ տղամարդկանց, որոնց մեծ մասը շինարարական աշխատանքներին մասնակցելու նպատակով մաս-մաս ոչնչացվում էր: Դրանով իսկ թուրքերն ազատվում էին հնարավոր դիմադրություն ցույց տվող հայկական ուժերից:

**Երկրորդ փուլ.**

1915թ. ապրիլի 24-29-ը թուրքական իշխանությունները ձերբակալեցին 800-ից ավելի հայ մտավորականների, որոնց մեծ մասը դաժանորեն սպանդի ենթարկվեց: Իթթիհատականները չխնայեցին նույնիսկ խորհրդարանի պատգամավորներ Գրիգոր Զոհրապին և Վարդգես Մերենկյուլյանին: Ավելին՝ Թալեաթի հրամանով Գրիգոր Զոհրապյան առանձնակի դաժանությամբ սպանվեց:



**Երրորդ փուլ.**

Ձեռնատելով և գլխատելով բովանդակ արևմտահայությանը, նրան մեկուսացնելով արտաքին աշխարհից՝ թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ երրորդ քայլին՝ անպաշտպան և անօգնական կանանց, ծերունիների, երեխաների զանգվածային ջարդերին և բռնագաղթին: Սա իր դաժանությամբ մարդկության պատմության մեջ նախադեպը չունեցող ցեղասպանություն էր, որին զոհ գնաց 1,5 մլն մարդ: Ցեղասպանություն, որը նպատակ ուներ իրագործելու հայ ժողովրդի մասսայական ոչնչացումն ու հայրենագրկումը:

Հայասպան գործողությունները հետագայում ևս շարունակվեցին: Որոշակի ընդհատումներով տեղի ունեցան նաև 1918թ. և նոր թափ ստացան 1920-1922թթ. Թուրքիայի քեմալական իշխանությունների շնորհիվ:

<b>ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1894-1922 ԹԹ.</b>			
<b>ԹՈՒՐԿԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԸ</b>	<b>ԹՎԱԿԱՆԸ</b>	<b>ԶՈՇԵՐԻ ԹԻՎԸ</b>	<b>ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՎՄՅՐԸ</b>
<b>Սուլթանական</b>	1894-1896	300.000	Արևմտյան Հայաստան և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրեր
<b>Երիտթուրքական</b>	1909	30.000	Ադանայի և Հալեպի վիլայեթներ
	1915-1916	1.500.000	Արևմտյան Հայաստան և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ վայրեր
	1918	500.000	Հայաստանի Հանրապետություն և Անդրկովկասի հայաբնակ այլ վայրեր
<b>Քեմալական</b>	1920-1922	200.000	Հայաստանի Հանրապետություն
		60.000	Կիլիկյան Հայաստան, Իզմիր
<b>Ընդամենը՝ 2.590.000</b>			

Վերը շարադրվածն ակնհայտ է դարձնում այն իրողությունը, որ իր հոգեվարքն ապրող Թուրքական կայսրությունում 19-րդ դարի 70-ական թթ. վերջերից հայերի ֆիզիկական ոչնչացման գաղափարը բարձրացվեց պետական քաղաքականության աստիճանի և հետևողականորեն իրագործվեց՝ անկախ վարչաձևից, 1890-ական-1922թթ. ընկած ժամանակահատվածում:



*P.S. ՄԱԿ-ի 1948թ. դեկտեմբերի 9-ի «Ցեղասպանության հանցագործությունները կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայում և միջազգային մի շարք այլ փաստաթղթերում սահմանված են, որ այդօրինակ հանցագործությունները վաղեմության ժամկետ չունեն և ցեղասպանություն իրագործած յուրաքանչյուր պետություն հատուկ իրավական պատասխանատվություն է կրում, անկախ այն բանից, թե կգտնվեն ու պատժի կենթարկվեն ոճրագործությունների անմիջական կազմակերպիչները, թե՛ ոչ:*